



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 15

24-ը Սեպտեմբերի 2016թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 10-րդ փողոց թիվ 12 հասցեի 05-084-0007-0005 ծածկագրով հողամասի և շենք շինությունների նկատմամբ Սարգիս Բենյամինի Գրիգորյանի ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով.

Որոշում են՝

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սարգիս Բենյամինի Գրիգորյանի ծնվ.1952թ., Զեփյուտ Հայրապետի Գրիգորյանի ծնվ.1954թ., Անահիտ Սարգսի Գրիգորյանի ծնվ.1976թ., Անդրանիկ Սարգսի Գրիգորյանի ծնվ.1979թ. և Ալբերտ Սարգսի Գրիգորյանի ծնվ.1982թ. հողօգտագործման իրավունքը, շինության զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0,32 հա հողամասի և դրա վրա կառուցված շենք շինությունների՝ նկատմամբ:

2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:

4. Շինությանը տրամադրել գ. Վարդաձոր 10-րդ փողոց թիվ 12 հասցեն:

5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Սարգիս Բենյամինի Գրիգորյանի ընտանիքի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ՝



Ռ. Սիրականյան